

073/13883-2021



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

«31» օգոստոս 2021թ.

ՀՀ Պաշտպանության նախարար
Արշակ Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունից հետո ստորագրված Գորիս-Դավիթ -Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհի շահագործման կազմակերպման վերաբերյալ փաստաթղթի պատճենը: Դրա անհրնարինության դեպքում խնդրում եմ հայտնել:

1. Ինչպե՞ս է կազմակերպվում ճանապարհային երթևեկությունը նշված տարածքներում՝ ըստ վերոնշյալ փաստաթղթի (կամ բանավոր պայմանավորվածության արդյունքում):
2. Ինչպիսի՞ կարգավորումներ կան նշված տարածքներում հնարավոր ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում, մասնավորապես՝ ինչպե՞ս կկարգավորվի խնդիրը, երբ պատահարի կողմերը կհանդիսանան Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի քաղաքացիներ (պատճառված վնասի հատուցում, առողջապահական առաջին օգնության ծառայությունների մատուցում և այլն):

Հարգանքով՝
ՀՀ ԱԺ պատգամավոր
Աննա Գրիգորյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

06» 09 2021թ.

ՀՀ ԱԺ պատգամավոր
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան 31.08.2021թ. Ձեր գրության՝ հայտնում եմ, որ բարձրացված հարցերը դուրս են Պաշտպանության նախարարության գործառույթների շրջանակներից:

Հարգանքով՝

9/4/2021

X *Արշակ Կարապետյան*


ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Подписано: KARAPETYAN ARSHAK 1602670056

Կատ.՝ Ա. Պետրոսյան
Հեռ.՝ 010-29-46-86

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանին»

Հարգելի պարոն Կարապետյան,

2020 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ վարչապետի, ՌԴ եւ ԱՀ նախագահների միջեւ ստորագրված հայտարարության առաջին կետն ամրագրում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

Հակառակ պաշտոնապես ստորագրված այդ հայտարարության, 2020 թ. դեկտեմբերի 17-18-ին Կապան քաղաքի ու հարակից 13 գյուղի (Դավիթ Բեկ, Կաղնուտ, Ուժանիս, Եղվարդ, Ագարակ, Դիցմայրի, Սյունիք, Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Ներքին Հանդ, Ծավ) անվտանգությունն ապահովող դիրքերը դատարկվել են, եւ ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներն ու կամավորական ջոկատները ետ են քաշվել եւ նահանջել են:

Դեկտեմբերի 17-ին ՀՀ Պաշտպանության նախարարությունը պաշտոնապես տարածած հաղորդագրությունով (<https://mil.am/hy/news/8746>) հայտնել է, որ «Սյունիքի սահմանի որոշ հատվածներում կտեղակայվեն ռուս սահմանապահներ:

Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակում դեկտեմբերի 17-ին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել գորամիավորման հրամանատարի, Սյունիքի մարզպետի և ԱԱԾ սահմանապահ զորքերի տարածքային ստորաբաժանման հրամանատարի մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են Հայաստանի և Ադրբեջանի սահմանագատման, նոր ձևավորվող բնագծերում զինված ուժերի ստորաբաժանումների և սահմանապահ զորքերի տեղակայման հետ կապված հարցեր»:

2020թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ ՊՆ Զինուժ ծրագրին տված հարցազրույցում ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը հայտարարել է, որ «Գորիս-Դավիթ Բեկ ճանապարհի 21 կմ-ը իրենց հսկողության տակ են վերցնում ռուսական սահմանապահ զորքերը: Իրենք վերահսկում են ճանապարհը, մեր սահմանապահ զորքերը կանգնում են մեր տարածքում եւ վիզուալ վերահսկում են այդ ճանապարհը՝ ապահովելով երկրորդ շերտի անվտանգությունը: Մեր սահմանապահ զորքերի հետեւում կանգնած է մեր բանակը: Եվ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ մեր սահմանապահ զորքերի ու ճանապարհի միջեւ որեւէ զորք չի լինելու: Նույնը վերաբերում է Ադրբեջանին: Վիզուալ հսկողություն կատարում են ադրբեջանական սահմանապահ զորքերը, հետեւում՝ իրենց զորքը: Այնտեղ նույնպես սահմանապահ զորքերի եւ ճանապարհի արանքում չպետք է լինի որեւէ զինված ստորաբաժանում: Ռուսաստանը մեր եւ ադրբեջանցի սահմանապահների հետ միասին որոշում է, թե ինչ հեռավորության վրա կանգնի իրենց դիտակետը կամ որեւէ այլ միջոց, որն ապահովում է ճանապարհի վերահսկողությունը: Ռուսաստանն ունի անցակետ Գորիսի հատվածում եւ Դավիթ Բեկում: Հիմա գնում է այդ գործընթացը, երբ սահմանապահ զորքերը որոշում են իրենց դիրքերը, ինչ գծով են կանգնելու, եւ դա արվում է ռուս սահմանապահների կողողինացման ներքո: Նույն ձեւով ապահովվում է Կապան-Ճակատեն ճանապարհի անվտանգությունը»:

Դեկավարվելով ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, ինչպես նաև «ՀՀ ազգային ժողովի պատգամավորի գործունեության

երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 6 –րդ հոդվածով՝ խնդրում ենք Ձեր պարզաբանումը հետևյալի վերաբերյալ

1. Արդյոք 2020 թվականի դեկտեմբերի 17-18-ին ու դրան հաջորդող օրերին ՀՀ ՋՈՒ ստորաբաժանումների եւ կամավորական խմբերի ետքաշման համար տրվե՞լ է գրավոր, պաշտոնական հրաման, եթե՝ այո, ապա՝ ու՞մ կողմից: Խնդրում են տրամադրել դրա պատճեն:
2. Նման հրամանի առկայության պարագայում, ինչի՞ հիման վրա է այդպիսի որոշում կայացվել:
3. ՀՀ ՋՈՒ ստորաբաժանումների եւ կամավորական խմբերի ետքաշումից առաջ Հայաստանի Հանրապետության (այդ թվում ՀՀ պաշտպանության նախարարի) կողմից ստորագրվե՞լ է որեւէ փաստաթուղթ (անկախ փաստաթղթի կարգավիճակի՝ համաձայնագիր, հայտարարություն, հուշագիր, հռչակագիր, դեկլարացիա), որեւէ այլ երկրի կամ երկրների պաշտոնական ներկայացուցիչների հետ:
4. Եթե՝ այո, ապա կոնկրետ ու՞մ կողմից է ստորագրվել, խնդրում են տրամադրել դրա պատճեն:
5. Եթե՝ այո, ապա արդյոք նախքան դրա ստորագրումը բանակցությունների համար հայկական կողմից կազմավորվե՞լ է պատվիրակություն, ու՞մ գլխավորությամբ եւ ո՞ւմ հանձնարարությամբ: Առկայության դեպքում, խնդրում են, տրամադրել նաև այդ պատվիրակության անհատական կազմը և դրա ստեղծման իրավական հիմքը:
6. Նման փաստաթղթի ստորագրման դեպքում արդյոք այն համաձայնեցվե՞լ է ՀՀ վարչապետի, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ Գլխավոր Շտաբի, ՀՀ ԱԳՆ հետ և ի՞նչ ձևաչափով է համաձայնեցվել, բանավոր, թե՞ գրավոր հաստատմամբ:


Խնդրում են տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում են գրավոր տեղյակ պահել մերժման իրավական հիմքի մասին:

Կանխավ շնորհակալ եմ՝

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր

ՀՀ ԱԺ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ

Գեղամ Մանուկյան



04.10.2021թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 11 » 10 2021 թ.

ՊԿՄԻՈ-386

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր
ՀՀ ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի
մշտական հանձնաժողովի անդամ **Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մանուկյան

Ի պատասխան Ձեր 2021թ. հոկտեմբերի 4-ի հարցերի առնչությամբ տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցերը ՀՀ պաշտպանության նախարարության իրավասություններից և լիազորություններից դուրս են:

Ներկայացված հարցադրումների վերաբերյալ այլ դիտարկումներ չունենք:

Հարգանքով՝


Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.' գ-տ Ա. Զաքարյան
Հեռ.' 010-665248

043/4505-2021թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

«08» հոկտեմբեր 2021թ.

ՀՀ Պաշտպանության նախարար
Արշակ Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն առ այն, թե

1. Ո՞ր փաստաթղթով է կանոնակարգվում Գորիս-Դավիթ-Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհների երթևեկությունը և ապահովվում անվտանգությունը:
2. Փաստաթղթի բացակայության պարագայում բանավոր ինչպիսի՞ պայմանավորվածություններ են ձեռք բերվել վերոնշյալ ճանապարհահատվածների և քաղաքացիների անվտանգության ապահովման և երթևեկության կանոնակարգման վերաբերյալ:

Հարգանքով՝
Աննա Գրիգորյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ


« 16 » 10 2021թ.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 2021թ. հոկտեմբերի 8-ի գրության՝ հայտնում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պաշտպանության նախարարությանը հասցեագրված նույնաբովանդակ գրությունը ուղղվել է նաև Վարչապետի աշխատակազմի ղեկավարին, որը վերջինիս կողմից ուղարկվել է համապատասխան գերատեսչություններ՝ այդ թվում նաև Պաշտպանության նախարարություն՝ վերաբերող մասով տեղեկատվություն ներկայացնելու համար՝ առաջարկում եմ հարցադրումների ամփոփ պատասխանը ստանալ ՀՀ վարչապետի աշխատակազմից:

Հարգանքով՝

 Недействительная подпись

X *Ar. Karapetyan*

ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Подписано: KARAPETYAN ARSHAK 1602670056

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ փ/գ-տ Ա. Մարգարյան

Հեռ.՝ 010-665248

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 18 » 10 2021թ.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 2021թ. հոկտեմբերի 8-ի գրության՝ հայտնում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պաշտպանության նախարարությանը հասցեագրված նույնաբովանդակ գրությունը ուղղվել է նաև Վարչապետի աշխատակազմի ղեկավարին, որը վերջինիս կողմից ուղարկվել է համապատասխան գերատեսչություններ՝ այդ թվում նաև Պաշտպանության նախարարություն՝ վերաբերող մասով տեղեկատվություն ներկայացնելու համար՝ առաջարկում եմ հարցադրումների ամփոփ պատասխանը ստանալ ՀՀ վարչապետի աշխատակազմից:

Հարգանքով՝

 Недействительная подпись

X *Ա. Գրիգորյան*

ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Подписано: KARAPETYAN ARSHAK 1602670056

Կառ.՝ փ/գ-տ Ա. Մարգարյան
Հեռ.՝ 010-665248

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34

093/4039-2021թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

«13» սեպտեմբեր 2021թ.

«ԱԿՄ տնօրեն Արմեն Արազյանին

Հարգելի պարոն Արազյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունից հետո ստորագրված Գորիս-Դավիթ -Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհի շահագործման կազմակերպման վերաբերյալ փաստաթղթի պատճենը: Դրա անհրնարինության դեպքում խնդրում եմ հայտնել:

1. Ինչպե՞ս է կազմակերպվում ճանապարհային երթևեկությունը նշված տարածքներում՝ ըստ վերոնշյալ փաստաթղթի (կամ բանավոր պայմանավորվածության արդյունքում):
2. Ինչպիսի՞ կարգավորումներ կան նշված տարածքներում հնարավոր ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում, մասնավորապես՝ ինչպե՞ս կկարգավորվի խնդիրը, երբ պատահարի կողմերը կհանդիսանան Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի քաղաքացիներ (պատճառված վնասի հատուցում, առողջապահական առաջին օգնության ծառայությունների մատուցում և այլն):

**Հարգանքով՝
Աննա Գրիգորյան**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Տ Ն Օ Ր Ե Ն

Երևան-1, Նալբանդյան փ. 104

« 25 » 09 2021 թ.

№ 13/202


ՀՀ ԱԺ պատգամավոր
Աննա Գրիգորյանին
ք. Երեւան, 0095
Մարշալ Բաղրամյան 19

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Ի պատասխան ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված 13.09.2021 թ. 073/4037/21 թվակիր Ձեր գրավոր հարցմանը՝ հայտնում ենք, որ դրանում ներկայացված հարցադրումները ՀՀ օրենսդրությամբ Ազգային անվտանգության ծառայությանը վերապահված իրավասությունների շրջանակից դուրս են:

Հարգանքով՝

Ա. Աբաջյան



0991



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Պ Ա Տ Ք Ա Մ Ա Վ Ո Ր

«28» սեպտեմբեր 2021թ.

ՀՀ ԱԱԾ տնօրեն գներալ-մայոր
Արմեն Աբազյանին

Հարգելի պարոն Աբազյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն առ այն, թե

1. Ո՞ր փաստաթղթով է կանոնակարգվում Գորիս-Դավիթ-Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհների երթևեկությունը և ապահովվում անվտանգությունը:
2. Փաստաթղթի բացակայության պարագայում բանավոր ինչպիսի՞ր պայմանավորվածություններ են ձեռք բերվել վերոնշյալ ճանապարհահատվածների և քաղաքացիների անվտանգության ապահովման և երթևեկության կանոնակարգման վերաբերյալ:

Հարգանքով՝
Աննա Գրիգորյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Տ Ն Օ Ր Ե Ն**

Երևան-1, Նալբանդյան փ. 104

« 08 » հոկտեմբերի 2021թ.

№ 18/236

« Ազգային ժողովի պատգամավոր
Աննա Գրիգորյանին
ք.Երևան 0095,
Մարշալ Բաղդամյան 19

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Ի պատասխան ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված 28.09.2021 թվականի 073/4212.21 թվակիր Ձեր գրավոր հարցմանը՝ հայտնում ենք, որ դրանում ներկայացված հարցադրումները ՀՀ օրենսդրությամբ Ազգային անվտանգության ծառայությանը վերապահված իրավասությունների շրջանակից դուրս են:

Հարգանքով՝

Ա.Աբազյան

073/4314-2021

5416-2021



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

«28» սեպտեմբեր 2021թ.

ՀՀ Սահմանադրության գործերի հրամանատար,
գնդապետ Արման Մարալյանին

Հարգելի պարոն Մարալյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն առ այն, թե

1. Ո՞ր փաստաթղթով է կանոնակարգվում Գորիս-Դավիթ-Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհների երթևեկությունը և ապահովվում անվտանգությունը:
2. Փաստաթղթի բացակայության պարագայում բանավոր ինչպիսի՞ պայմանավորվածություններ են ձեռք բերվել վերոնշյալ ճանապարհահատվածների և քաղաքացիների անվտանգության ապահովման և երթևեկության կանոնակարգման վերաբերյալ:

Հարգանքով՝
Աննա Գրիգորյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ք. Երևան, Եղվարդի խճուղի 117/5, հեռ. (37415) 579766, ֆաքս (37415) 57-97-65

№ 5/2309

« 06 » 10 2021թ.


Հայաստանի Հանրապետության
ազգային ժողովի պատգամավոր
ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Ի պատասխան ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարին
հասցեագրված 28.09.2021 թվականի 073/4314-21 թվակիր Ձեր գրավոր
հարցմանը՝ հայտնում ենք, որ դրանում ներկայացված հարցադրումները ՀՀ
օրենսդրությամբ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերին վերապահված
իրավասությունների շրջանակից դուրս են:

Հարգանքով՝

գնդապետ

 Ա. ՄԱՐԱԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

«08» հոկտեմբեր 2021թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի ղեկավար
Արայիկ Հարությունյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն առ այն, թե

1. Ո՞ր փաստաթղթով է կանոնակարգվում Գորիս-Դավիթ-Բեկ, Կապան-Ճակատեն ճանապարհների երթևեկությունը և ապահովվում անվտանգությունը:
2. Փաստաթղթի բացակայության պարագայում բանավոր ինչպիսի՞ պայմանավորվածություններ են ձեռք բերվել վերոնշյալ ճանապարհահատվածների և քաղաքացիների անվտանգության ապահովման և երթևեկության կանոնակարգման վերաբերյալ:

**Հարգանքով՝
Աննա Գրիգորյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Տ Ն Օ Ր Ե Ն**

Երևան-1, Նալբանդյան փ. 104

« 29 » հոկտեմբեր 2021 թ.

№ 18/341

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի №02/05.1/36956-2021 թվակիր հանձնարարականի՝ հայտնում ենք, որ

1. Գորիս-Դավիթ Բեկ, Կապան-Ճակատեն հատվածներում երթևեկության անվտանգությունն ապահովվում է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի, ՀՀ-ում ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչության զինծառայողների կողմից՝ տրանսպորտային միջոցների շարասյուների կազմակերպման և ուղեկցման եղանակով:

2. Վերոնշյալ ճանապարհի տվյալ հատվածներում քաղաքացիների անվտանգությունը, երթևեկության կազմակերպումն իրականացվում է ՀՀ և ՌԴ սահմանապահ ծառայությունների ղեկավարների միջև ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունների արդյունքում:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ առաջացած իրավիճակից ելնելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախաձեռնել է.

1. Մ-17, (Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն հատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնել Մ-17, (Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներ:

Մտից № 6005-2P
« 01 » 11 2021 թ.
ՀՀ ՊՈԼԻՑԻԱ ԵՎ ԱՆՏՐԱԿԱՆ
ԿՈՏԱՅԻՆՈՒԹՅԱՆ

Նշված շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացն ավարտական փուլում է: Նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով ընդունվելուց հետո կիրականացվի շինարարական աշխատանքների ձեռքբերման գործընթաց և համապատասխան պայմանագրի կնքվելուց հետո կմեկնարկեն հիմնանորոգման աշխատանքները, ինչը նախատեսվում է իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետներում:

2. Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Գորիս-Դավիթ Բեկ հատվածում Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ճանապարհը շրջանցող Հ-46 /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/ (Սյունիք) հանրապետական նշանակության ճանապարհի կմ25+000-կմ37+500, կմ37+500-կմ55+000 և կմ55+000-կմ68+000 հատվածների (ընդհանուր մոտ 43 կմ երկարությամբ հատված) հիմնանորոգման աշխատանքները: Այս ճանապարհահատվածների հիմնանորոգման հետ կապված ՀՀ պետական բյուջեից տրվել են հատկացումներ, հիմնանորոգումն ամբողջությամբ կավարտվի մինչև ընթացիկ տարվա վերջ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախաձեռնվել են Տաթևի վանական համալիրից մինչև Լծեն ճանապարհի և S-8-49, /S-8-48/-Լծեն տեղական նշանակության ճանապարհի վերակառուցման, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի այլ ճանապարհների (մասնավորապես, Որոտան-Խոտ, Հ-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան, Տանձավեր-Շուռնուխ ճանապարհների կառուցման աշխատանքները:

Գորիս-Կապան ճանապարհահատվածում ստեղծված իրավիճակի վերաբերյալ ՀՀ վարչապետը հրապարակային պարզաբանում է ներկայացրել սեպտեմբերի 15-ի Ազգային ժողովի նիստի ընթացքում՝ պատասխանելով պատգամավոր Արմեն Խաչատրյանի հարցին (www.youtube.com/watch?v=Cxlyzmr8Xo&ab_channel=GvernmentofArmenia հղումով):

Հարկ ենք համարում նշել, որ Ձեր կողմից արձարժված հարցերին անդրադարձ է կատարվել նաև Ազգային ժողովի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի նիստում՝ կառավարության անդամների հետ պատգամավորների հարցուպատասխանի ընթացքում:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԱՐԱՋՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար

Արայիկ Հարությունյանին

Պարոն Հարությունյան,

Ղեկավարվելով ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 3-րդ մասի 4-րդ կետով, ակնկալում եմ ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝

1. 2020թվականի նոյեմբերի 9-ին եւ հունվարի 11-ին ՌԴ եւ ԱՀ նախագահներ Վլադիմիր Պուտինի, Իլհամ Ալիևի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ստորագրված հայտարարություններին կից, դրանց իբրեւ հավելված կամ ուղղակի՝ դրանց վրա հղում տված որեւէ այլ փաստաթուղթ ՀՀ պաշտոնական ներկայացուցիչների կողմից ստորագրվել է 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
2. Եթե այո, ինչո՞րում եմ տրամադրել դրա պատճենը:
3. 2020 թվականի դեկտեմբերին ստորագրվել է երկկողմ կամ եռակողմ որեւէ փաստաթուղթ (հայտարարություն, հուշագիր, պայմանագիր) ՀՀ կառավարության անդամների (այդ թվում ՀՀ պաշտպանության նախարարի) կողմից:
4. Եթե այո, ինչո՞րում եմ տրամադրել դրա պատճենը:
5. Եթե ստորագրվել է նման որեւէ փաստաթուղթ, ապա ի՞նչ եղանակով է այն ներկայացվել հանրությանը:
6. Եթե ստորագրվել է որեւէ փաստաթուղթ եւ չի ներկայացվել հանրությանը, ապա ի՞նչ իրավական կարգավորումների հիման վրա եւ ի՞նչ հիմնավորմամբ է այն գաղտնի պահվել:

Հ.Գ.


Համապատասխան ընթացակարգերն անցնելով ինձ տրվել է գաղտնի տեղեկատվություն ստանալու իրավունք:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի անդամ,

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր՝

Գեղամ Մանուկյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀՀ ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանին

Պարոն գեներալ-լեյտենանտ,

2021 թվականի հոկտեմբերի 6-ին, ԱԺ հարց ու պատասխանի ընթացքում, Նիկոլ Փաշինյանը խոսելով 2020 թվականի դեկտեմբեր 17-19-ին Սյունիքում ՀՀ Չինված ուժերի ստորաբաժանումների եւ կամավորական ջոկատների հետքաշման մասին, հայտարարել է բառացիորեն հետեւյալը՝ «...*ես երբևէ հրաժարվել եմ, որ ես այդ որոշման պատասխանատուն եմ: Երբևէ տենց բան եղել է: Գրավոր է եղել, թե բանավոր է եղել, կոնկրետ ասում եք՝ նախարարը գրավոր է սովել, թե բանավոր է սովել, իրենց ընթացակարգերով են տալիս հրամանները: Զննարկում եղել է. այո, եղել է: Անվտանգության խորհրդի նիստ չի եղել, բայց անվտանգության խորհրդի գործնականում բոլոր անդամները, Սյունիքի մարզպետը, արտաքին գործերի նախարարը, որ ասում էր՝ մենք տեղյակ չենք, նախարարի տեղակալը հետո, որովհետև ինքը գործուղման էր, մասնակցել են այդ քննարկմանը: Այդ քննարկումը տեղի է ունեցել Կառավարությունում և որոշում է կայացվել: Ինչո՞ւ է կայացվել այդ որոշումը. որոշումը կայացվել է՝ հասցեագրելու համար ձեր՝ հիմա հնչեցվող քննադատությունները, կայացվել է պատերազմից խուսափելու համար, որովհետև իմ համոզմունքն այն էր, որ եթե այդ որոշումը չկայացվեր, այնտեղ ռազմական գործողություններ էին սկսվելու և, իրոք, Սյունիքում մենք ունենալու էինք խնդիրներ»: (պաշտոնական հղումը՝ parliament.am/transcript.php?lang=arm#1630)*

Դեկլարվելով ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 3-րդ մասի 4-րդ կետով, ակնկալում եմ Ձեր պարզաբանումներն ու պատասխանները հետեւյալի վերաբերյալ՝

1. Ի՞նչ ձեւաչափով (գրավոր, բանավոր, այլ...) է եղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերին ՀՀ Սյունիքի մարզի առաջնագծում ՀՀ ՉՈՒ ստորաբաժանումների եւ կամավորական խմբերի հետքաշումը 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ վարչապետի, ՌԴ եւ ԱՀ նախագահների համատեղ հայտարարության 1-ին կետով ամրագրված («...Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում...»):
https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun.pdf) իրենց զբաղեցրած դիրքերից հետքաշման հրամանը:
2. Ի՞նչ փաստաթղթի հիման վրա է ՀՀ ՉՈՒ ԳՇ կողմից տրվել ՀՀ ՉՈՒ ստորաբաժանումների եւ կամավորական խմբերի հետքաշման հրամանը:

3. Արդյո՞ք հետքաշման հրամանի համար հղում է կատարվել ՀՀ Պաշտպանության նախարարի կամ ՀՀ Կառավարության կողմից ստորագրված որեւէ փաստաթղթի վրա:
4. ՀՀ ՁՈՒ Գլխավոր շտաբում կազմվե՞լ է ռազմա-քաղաքական իրավիճակի շուրջ որեւէ մասնագիտական գրավոր վերլուծություն, ուրի հիման վրա ՀՀ Ազգային Ժողովում Նիկոլ Փաշինյանը հայտարարել է 2021 թվականի հոկտեմբերի 6-ին, թե հետքաշումն իրականացվել է «... պատերազմից խուսափելու համար, որովհետև իմ համոզմունքն այն էր, որ եթե այդ որոշումը չկայացվեր, այնտեղ ռազմական գործողություններ էին սկսվելու և, իրոք, Սյունիքում մենք ունենալու էինք խնդիրներ»:

Հ.Գ.

Համապատասխան ընթացակարգերն անցնելով ինձ տրվել է գաղտնի տեղեկատվություն ստանալու իրավունք:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի անդամ,

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր՝

Գեղամ Մանուկյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

ՀՀ Պաշտպանության նախարար պարոն Սուրեն Պապիկյանին

Պարոն Պապիկյան,

2020 թվականի դեկտեմբերի 18-ին, ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանն ու ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն ստորագրել են «Քաղաքացիական տրանսպորտային միջոցների եւ բեռների ավտոճանապարհներով անվտանգ շարժ կազմակերպելու մասին» հուշագիր, որի 1-ին կետի հիման վրա էլ ՀՀ ՁՈՒ Գլխավոր շտաբը տվել է Սյունիքում ՀՀ Ձինված ուժերի ստորաբաժանումների եւ կամավորական ջոկատների հետքաշման մասին մարտական հրամանը:

Ղեկավարվելով ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 3-րդ մասի 4-րդ կետով, ակնկալում եմ ստանալ հիշյալ հուշագրի պատճենը, կամ դրա ամբողջական տեքստի հետ ծանոթանալու հնարավորության ընձեռնումը:

Հ.Գ.


Համապատասխան ընթացակարգերն անցնելով ինձ տրվել է գաղտնի տեղեկատվություն ստանալու իրավունք:

Հարգանքներով՝

ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովի անդամ,

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր՝

Գեղամ Մանուկյան



ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ ՀԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՌԻՍԱԲԵՐ» ՓԲԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին
Երկիր Մեդիա հ/ը, Լրատվական և քաղաքական ծրագրերի տնօրեն, ՀՀ քաղաքացի
Գեղամ Մանուկյանից

ք. Երևան, 11/01/2021թ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նոյեմբերի 10-ին [հրապարակված](#) Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը փաստացի ստորագրվել է ՀՀ վարչապետի կողմից:
2. Եթե՝ այո, ապա որտե՞ղ է հրապարակված ՀՀ վարչապետի ստորագրությամբ վավերացված հայտարարության բնօրինակը՝ լուսապատճեն կամ pdf: (Նշենք, որ Հայտարարության կողմերից միայն ՌԴ նախագահի ստորագրությամբ Հայտարարության լուսապատճեն հրապարակված է ՌԴ-ում ՀՀ դեսպանատան կայքում):
3. Խնդրում ենք տրամադրել Հայտարարության ստորագրված բնօրինակի լուսապատճեն կամ pdf օրինակը, որտեղ առկա են երեք կողմերի ստորագրությունները:
4. Արդյոք հայտարարությանը կից, դրա մաս կազմող կամ դրա պայմանների կատարումն ապահովող առանձին հավելվածներ կա՞ն:
5. Եթե՝ այո, ապա խնդրում ենք տրամադրել Հայտարարության մաս կազմող կամ դրա պայմաններից բխող այլ փաստաթղթերի կամ հավելվածների բնօրինակների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում ենք նաև հարցման պատասխանն ուղարկել էլ. փոստով ևս՝ gegham@yerkirmedia.am հասցեին: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Երկիր Մեդիա հեռուստաընկերության
Լրատվական և քաղաքական
ծրագրերի տնօրեն՝
Գեղամ Մանուկյան



Ուրբաթ, 15 հունվարի 2021 թ.

**Երկիր Մեդիա հ/ը լրատվական և քաղաքական ծրագրերի տնօրեն
պարոն Մանուկյանին**

Հարգելի պարոն Մանուկյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

1. Նոյեմբերի 10-ին հրապարակված հայտարարությունն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից:
 2. Ստորագրված հայտարարության լուսապատճեն հրապարակված է Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնական՝ www.primeminister.am կայքէջի «Մամլո հաղորդագրություններ» բաժնում (տե՛ս՝ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>):
 3. Ստորագրված հայտարարության լուսապատճեն հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun.pdf :
- 4, 5. Հայտարարությանը կից հավելվածներ չկան:

**Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի
վարչության պետ
Արմեն Խաչատրյան**

